Luys Lույս®

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՆԵՐՈՒԺԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԻՆԴԵՔՍՆԵՐԸ ԵՎ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Հաշվետվություն Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագրի կողմից հրապարակված «Մարդկային ներուժի զարգացման զեկույց-2021/2022»-ի հիման վրա

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ 1

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 2

2. ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ 3

3. ՄԱՐԴԿԱՅԻՆ ՆԵՐՈՒԺԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ԱՇԽԱՐՀՈՒՄ 6

4. ՄԱՐԴԿԱՅԻՆ ՆԵՐՈՒԺԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՅԼ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ 10

5. ԱՄՓՈՓՈՒՄ 14

ՀԱՎԵԼՎԱԾ 16

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ՀՀ – Հայաստանի Հանրապետություն

ԽՍՀՄ – Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միություն

ԱՄՆ – Ամերիկայի Միացյալ Նահանգներ

ՀԱԵ – համախառն ազգային եկամուտ

ՄԱԿԶԾ – Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագիր

ՄՆԶԶ – մարդկային ներուժի զարգացման զեկույց

ՄՆԶԻ – մարդկային ներուժի զարգացման ինդեքս

ԱՄՆԶԻ – անհավասարության հաշվառմամբ՝ մարդկային ներուժի զարգացման ինդեքս

ՄՄՆԶԻ – մոլորակային կայունության հաշվառմամբ՝ մարդկային ներուժի զարգացման ինդեքս

ԳԶԻ – գենդերային զարգացման ինդեքս

ԳԱԻ – գենդերային անհավասարության ինդեքս

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագիրը (ՄԱԿԶԾ)[1] 1990 թվականից հրապարակում է ամենամյա զեկույցներ, որոնք ամփոփ տեղեկատվություն են տալիս տարբեր երկրներում մարդկային ներուժի զարգացման վերաբերյալ (ընդ որում, յուրաքանչյուր նոր զեկույցում, բացի տվյալ տարեթվի հետ առնչվող տեղեկատվության ներառումից, վերանայվում և թարմացվում են նաև նախորդ զեկույցներում տեղ գտած տվյալները):

Անհերքելի է այդ զեկույցների օգտակարությունը առավել հասցեական սոցիալական և տնտեսական քաղաքականության մշակման համար:

Վերջին զեկույցի խորագիրը՝ *«Անորոշ ժամանակներ, չկարգավորված կյանքեր. կերտելով մեր ապագան փոփոխվող աշխարհում»*, խիստ բնորոշ է ժամանակակից աշխարհին հատուկ մտահոգիչ ու անորոշություններով լի իրավիճակին: Մասնավորապես, «Մարդկային ներուժի զարգացման զեկույց-2021/2022»-ում նշվում է արդեն երրորդ տարին շարունակվող համավարակի, ռուս-ուկրաինական պատերազմի և կլիմայական ու էկոլոգիական աղետների հետևանքով ստեղծված անորոշ ու մտահոգիչ իրավիճակի մասին: Միաժամանակ, Զեկույցում ընդգծվում է, որ անորոշությունն ինքնին նորություն չէ մարդկության համար: Նրան մշտապես ուղեկցել են համաճարակները, պատերազմները, ջրհեղեղներն ու երաշտները: Դրանց արդյունքում նույնիսկ քաղաքակրթություններ ու երկրներ են անհետացել, սակայն մեծամասնությանը հաջողվել է հարմարվել նոր, մտահոգիչ իրողություններին և գտնել դրանք հաղթահարելու ճանապարհը:

Ասվածն առավել քան արդիական է Հայաստանի համար, որտեղ վերը հիշատակված անորոշություններին գումարվել են ընթացող ռազմաքաղաքական անցանկալի զարգացումները, և այդ ֆոնին, ցավոք, ինչ-որ իմաստով «բնական» է դարձել, որ անհատների ճակատագրերը ստորադասվում են խմբային (ցավոք, հաճախ՝ ապազգային) շահերին, ստվերվում է մարդկային ներուժի կարևորությունը և վտանգվում սերունդների բարեկեցությունը:

Նշվում է, որ, համավարակի պատճառով, Զեկույցի պատմության մեջ առաջին անգամ վերջին երկու տարում նվազել է մարդկային ներուժի զարգացման համաշխարհային ինդեքսը՝ զրոյացնելով նախորդ հինգ տարիների աճը: Ընդ որում, նվազել է աշխարհի երկրների ավելի քան 90%-ի մարդկային ներուժի զարգացման ինդեքսը (ՄՆԶԻ):

Ի դեպ, քանի որ համավարակի պատճառով 2021 թվականին զեկույց չի հրապարակվել, վերջին զեկույցը վերնագրվել է «Մարդկային ներուժի զարգացման

[1] https://www.undp.org/:

զեկույց-2021/2022» (ՄՆԶԶ-2021/2022)[2] և որոշ իմաստով ներառում է նաև չհրապարակված զեկույցում ընդգրկման ենթակա հիմնական տեղեկատվությունը:

Նկատի ունենալով, որ մարդկային ներուժի զարգացմանն առնչվող խնդիրները տարբեր խորությամբ դրսևորվում են գրեթե բոլոր երկրներում (բացառություն չէ նաև ՀՀ-ն), չափազանց արդիական է միջազգային համեմատությունների հիման վրա մարդկային ներուժի ուժեղ և թույլ կողմերի բացահայտումը:

Սույն հաշվետվության նպատակն է ամփոփ տեսքով ներկայացնել ՄՆԶԶ-2021/2022-ի՝ ՀՀ-ին վերաբերող դրույթները՝ աշխարհի 191 երկրների շարքում:

Հատկանշական է, որ Հայաստանի մարդկային ներուժի զարգացման հիմնական ցուցանիշները 2021 թվականին 2019-ի համեմատ վատթարացել են, արձանագրվել է անկում ինչպես զբաղեցրած հորիզոնականի (81-րդ հորիզոնականից Հայաստանը տեղափոխվել է 85-րդ հորիզոնական), այնպես էլ ՄՆԶԻ-ի արժեքի (0.778-ից նվազել է մինչև 0.759 միավոր) առումով:

Վերլուծությունում նախ հակիրճ ներկայացված են մարդկային ներուժի զարգացման հիմնական ցուցանիշները և դրանց հաշվարկման մեթոդաբանությունը:

Այնուհետև ներկայացվել է մարդկային ներուժի զարգացման առումով իրավիճակը Հայաստանում, մարդկային ներուժի զարգացման ՀՀ ցուցանիշները համեմատվել են տարածաշրջանի երկրների, ինչպես նաև երկրների տարբեր խմբերի և համաշխարհային միջինների հետ, վերջում համեմատական վերլուծության հիման վրա կատարվել են եզրահանգումներ:

2. ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՄՆԶԻ-ն հաշվարկվում է որպես դրա ենթաինդեքսների *(առողջության, կրթության* և *կենսամակարդակի)* միջին երկրաչափական: Առողջության և կենսամակարդակի ենթաինդեքսների որոշման համար ստանդարտացվում[3] են համապատասխանաբար *կյանքի սպասվող տևողությունը* և շնչային *համախառն*

[2] https://hdr.undp.org/system/files/documents/global-report-document/hdr2021-22pdf_1.pdf:

[3] Ցուցանիշի ստանդարտացումը $\frac{\text{փաստացի արժեք}-\text{նվազագույն արժեք}}{\text{առավելագույն արժեք}-\text{նվազագույն արժեք}}$ հանրահաշվական ձևափոխությունն է, որի արդյունքում ստացվում է $[0,1]$ միջակայքին պատկանող ինդեքս: Ստանդարտացումը թույլ է տալիս ազատվել տվյալ ցուցանիշի չափողականությունից՝ հնարավոր դարձնելով տարասեռ ցուցանիշների համադրումը (օրինակ՝ ներառումը ավելի ընդհանրական ինդեքսում):

ազգային եկամուտը (ՀԱԵ): Կրթության ենթաինդեքսը հաշվարկվում է որպես երկու ցուցիչների՝ *կրթության սպասվող* և *միջին տևողությունների* ստանդարտացված արժեքների միջին թվաբանական: Կրթության սպասվող տևողությունը կրթական տարիների այն ակնկալվող քանակն է, որը ենթադրվում է, որ դպրոց ընդունվող երեխան կծախսի կրթության վրա՝ ուսումնական հաստատությունների ընդունելության գործակիցների նախնական արժեքների պահպանման պարագայում: Կրթության միջին տևողությունը 25 և ավելի տարեկան բնակչության շրջանում կրթական տարիների միջին քանակն է:

Գծապատկեր 1. ՄՆԶԻ-ի կառուցման գործընթացը[4]



Համաձայն ՄՆԶԶ-ի մեթոդաբանության՝ երկրում մարդկային ներուժի զարգացումը համարվում է *շատ բարձր*, եթե ՄՆԶԻ-ն պատկանում է [0.800, 1.000] միջակայքին, *բարձր*՝ [0.700, 0.799], *միջին*՝ [0.550, 0.699] և ցածր՝ [0.000, 0.549] միջակայքներին:

Հակիրճ ներկայացնենք նաև Զեկույցում օգտագործվող մյուս ինդեքսների հաշվարկման մեթոդաբանությունը:

Անհավասարության հաշվառմամբ մարդկային ներուժի զարգացման ինդեքսը՝ (ԱՄՆԶԻ) հաշվարկվում է որպես անհավասարությամբ ճշգրտված ենթաինդեքսների երկրաչափական միջին: ԱՄՆԶԻ-ի արժեքը հավասար է ՄՆԶԻ-ին, երբ մարդկանց միջև անհավասարություն չկա, իսկ որքան անհավասարությունը մեծ է, այնքան ԱՄՆԶԻ-ն փոքր է ՄՆԶԻ-ից:

Գենդերային զարգացման ինդեքսի (ԳԶԻ) հաշվարկման համար ՄՆԶԻ-ն գնահատվում է կանանց և տղամարդկանց համար առանձին-առանձին, դրանց հարաբերությունն էլ ԳԶԻ-ն է: Որքան ԳԶԻ-ն մոտ է 1-ին, այնքան մեծ է մարդկային

[4] Աղբյուրը՝ ՄԱԶԾ պաշտոնական կայք՝ https://hdr.undp.org/data-center/human-development-index#/indicies/HDI (այցելվել է 09.09.2022թ.)

ներուժի գենդերային հավասարությունը: Ըստ գենդերային զարգացման երկրների դասակարգման հիմքում դրված է 1 արժեքից ԳԶԻ-ի բացարձակ շեղումը, այսինքն՝ $100 \cdot |\text{ԳԶԻ} - 1|$ մեծությունը: Մարդկային ներուժի ձեռքբերումներում կանանց և տղամարդկանց հավասարությունը համարվում է բարձր, եթե գենդերային հավասարությունից բացարձակ շեղումը ընկած է $[0\%, 2.5\%]$ միջակայքում: Նույն տրամաբանությամբ են սահմանվում նաև մնացած խմբերը (միջինից բարձր խումբը՝ $(2.5\%, 5\%]$ միջակայքի, միջին խումբը՝ $(5\%, 7.5\%]$ միջակայքի, միջինից ցածրը՝ $(7.5\%, 10\%]$ և ցածրը՝ $(10\%, \infty)$ միջակայքի դեպքում:

Գենդերային անհավասարության ինդեքսի (ԳԱԻ) հաշվարկման կարգը բավական նման է ԱՄՆԶԻ-ի հաշվարկման կարգին: ԳԱԻ-ի արժեքն ընկած է 0-ի և 1-ի միջև, որտեղ 0-ն համապատասխանում է գենդերային կատարյալ հավասարությանը, իսկ 1-ը՝ կատարյալ անհավասարությանը: ԳԱԻ-ն կառուցվում է հինգ բաղադրիչների հիման վրա՝ <u>մայրական մահացության գործակից, դեռահասների ծնելիության մակարդակ, խորհրդարանում կանանց տեսակարար կշիռ, առնվազն որոշակի միջնակարգ կրթություն ունեցող բնակչության տեսակարար կշիռ, աշխատուժի մասնակցության մակարդակ:</u>

Վերջին երկու զեկույցներում ՄՆԶԻ-ի հետ միասին ընդգրկված է նաև մոլորակային կայունության հաշվառմամբ՝ մարդկային ներուժի զարգացման ինդեքսը (ՄՄՆԶԻ): Այս ինդեքսն առաջին անգամ ներառվել է ՄՆԶԶ-2020-ում: Դրա հաշվարկման նպատակը դասական ՄՆԶԻ-ի ճշգրտումն է՝ նկատի ունենալով մարդկանց բացասական ազդեցությունը շրջակա միջավայրի վրա: Ենթադրվում է, որ այս ինդեքսի մշտադիտարկումը թույլ կտա առավելագույնս ներդաշնակեցնել սոցիալ-տնտեսական առաջընթացի և մոլորակային կայունության նպատակները:

ՄՄՆԶԻ-ի հաշվարկման նպատակով դիտարկվում է երկու լրացուցիչ ցուցանիշ՝ *1 շնչի հաշվով ածխածնային արտանետումներ* և *1 շնչի հաշվով ռեսուրսների սպառում*: Առաջին ցուցանիշը ներկայացնում է արդյունաբերական գործընթացներում ածխի, նավթի, գազի այրման հետևանքով արտանետված ածխաթթու գազի զանգվածի հարաբերությունը բնակչության միջին թվաքանակին: Երկրորդ ցուցանիշով հաշվարկվում է վառելիքային, մետաղական, ոչ մետաղական ռեսուրսների անկայուն սպառման զանգվածի հարաբերությունը բնակչության միջին թվաքանակին: Ակնհայտ է, որ այս երկու ցուցանիշների մեծ արժեքները վկայում են շրջակա միջավայրի կայունության խախտման մասին:

Ինդեքսի կառուցման առաջին քայլում վերոհիշյալ երկու ցուցանիշները ստանդարտացվում են: Այնուհետև հաշվարկվում է ճշգրտման գործակիցը՝ ստանդարտացված ցուցանիշների միջին թվաբանականի տեսքով: Վերջին՝ երրորդ քայլում կատարվում է ՄՆԶԻ-ի ճշգրտում՝ հետևյալ բանաձևով՝

ՄՄՆԶԻ = ՄՆԶԻ · (1 – ճշգրտման գործակից):

Վերոհիշյալ բանաձևից հետևում է, որ որքան մեծ է ածխածնային արտանետումների և ռեսուրսների անկայուն սպառման ծավալը, այնքան մեծ է ՄՄՆԶԻ-ի և ՄՆԶԻ-ի միջև շեղումը, հետևաբար նաև մարդկանց բացասական ներգործությունը մոլորակային կայունության վրա:

3. ՄԱՐԴԿԱՅԻՆ ՆԵՐՈՒԺԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ԱՇԽԱՐՀՈՒՄ

Համաձայն ՄՆԶԶ-2021/2022-ի՝ COVID-19-ի համավարակի պատճառով վերջին երկու տարում (առաջին զեկույցի հրապարակումից՝ 1990 թվականից ի վեր առաջին անգամ) ՄՆԶԻ-ն նվազել է՝ չեզոքացնելով նախորդ հինգ տարիների աճը (Գծապատկեր 2): Ընդ որում, աշխարհի երկրների ավելի քան 90%-ի ՄՆԶԻ-ն նվազել է 2020 և 2021 թվականներից առնվազն մեկի ընթացքում:

Գծապատկեր 2. Մարդկային ներուժի զարգացման համաշխարհային ինդեքսի դինամիկան



ՀՀ ՄՆԶԻ-ն 2021թ. կազմում է 0.759, և այս ցուցանիշով ՀՀ-ն 191 երկրների շարքում զբաղեցնում է 85-րդ հորիզոնականը՝ ընդգրկված լինելով մարդկային ներուժի զարգացման բարձր մակարդակ ունեցող երկրների խմբում:

Հարկ է նշել, որ առաջին զեկույցի հրապարակումից ի վեր մարդկային ներուժի զարգացման տեսանկյունից ՀՀ դիրքերը բավականին բարելավվել են (1990 թվականին Հայաստանի ՄՆԶԻ-ն կազմել է ընդամենը 0.656):

Այնուամենայնիվ, պետք է փաստել, որ 2019 թվականի համեմատ 2021-ին վատթարացում է արձանագրվել՝ ինչպես զբաղեցրած հորիզոնականի (81-րդ

հորիզոնականից Հայաստանը տեղափոխվել է 85-րդ հորիզոնական), այնպես էլ ՄՆԶԻ-ի արժեքի առումով (0.778-ից 0.759): Ընդ որում, հարկ է նշել, որ 2019թ. ՄՆԶԻ արժեքը ՄՆԶԶ-2021/2022-ում վերանայվել է՝ համաձայն ՄՆԶԶ-2020-ի ՄՆԶԻ-ն 2019թ. 0.776 էր, իսկ ՄՆԶԶ-2021/2022-ում այն դարձել է 0.778:

Հարկ է նշել, որ 2021թ. 2019-ի համեմատ նվազում է արձանագրվել ՄՆԶԻ-ի առողջության և կենսամակարդակի բաղադրիչներում: Մասնավորապես, կյանքի սպասվող տևողությունը 75.1 տարվանից նվազել է 72.0-ի, իսկ շնչային ՀԱԵ-ն նվազել է 736 PPP դոլարով[5] կամ 5.3%-ով: Կրթության բաղադրիչի երկու ցուցանիշներն էլ չեն փոփոխվել:

Գծապատկեր 3. ՀՀ ՄՆԶԻ-ի դինամիկան



Աղյուսակ 1-ում ներկայացված են ՄՆԶԻ-ն և դրա բաղադրիչները ՀՀ-ում և տարածաշրջանի մյուս երկրներում 2021 թվականին: Աղյուսակից երևում է, որ Հայաստանը ՄՆԶԻ-ով տարածաշրջանի հինգ երկրների թվում 4-րդն է և գերազանցում է միայն Ադրբեջանին (0.745 միավոր և 91-րդ հորիզոնական): Տարածաշրջանում առաջատարը Թուրքիան է (0.838 միավոր, 48-րդ հորիզոնական), երկրորդ տեղում Վրաստանն է (0.802 միավոր, 63-րդ հորիզոնական), իսկ երրորդում՝ Իրանը (0.774 միավոր, 76-րդ հորիզոնական):

[5] ԱՄՆ դոլարով արտահայտված փաստացի շնչային ՀԱԵ-ի փոխարեն ներկայացված է գնողունակության համարժեքությամբ «կշռված» շնչային ՀԱԵ-ի ցուցանիշը, որը ստացվում է փաստացի արժեքը միջազգային դոլարի (ըստ գնողունակության համարժեքության և 2017թ. հաստատուն գների) փոխարկելով:

Աղյուսակ 1. ՄՆԶԻ-ն և դրա բաղադրիչները ՀՀ-ում և տարածաշրջանի մյուս երկրներում 2021թ.

	Կյանքի սպասվող տևողություն, տարի	Կրթության սպասվող տևողություն, տարի	Կրթության միջին տևողություն, տարի	Շնչային ՀԱԵ, (2017 PPP դոլար)	ՄՆԶԻ
Հայաստան	**72.0**	**13.1**	**11.3**	**13,158**	**0.759**
Իրան	73.9	14.6	10.6	13,001	0.774
Թուրքիա	76.0	18.3	8.6	31,033	0.838
Վրաստան	71.7	15.6	12.8	14,664	0.802
Ադրբեջան	69.4	13.5	10.5	14,257	0.745

Աղյուսակ 1-ի տվյալները նաև վկայում են, որ Հայաստանը տարածաշրջանում համեմատական առավելություն ունի կրթության ոլորտում (կրթության միջին տևողությամբ այն զիջում է միայն Վրաստանին): Միևնույն ժամանակ, հարկ է նշել, որ միջին կենսամակարդակի առումով Հայաստանն իր բոլոր հարևաններից գերազանցում է միայն Իրանին (այն էլ փոքր չափով):

Աղյուսակ 2-ում ներկայացված են 2021 թվականին ՄՆԶԻ-ն և դրա բաղադրիչները ՀՀ-ում, ինչպես նաև տարբեր տարածաշրջաններում և երկրների խմբերում: Աղյուսակից երևում է, որ ՄՆԶԻ-ով Հայաստանը 0.005 միավորով գերազանցում է իր խմբի միջին ցուցանիշին, 0.074 միավորով՝ զարգացող երկրների միջինին և 0.027 միավորով՝ աշխարհի միջինին: Ընդ որում, զարգացող երկրների միջին ցուցանիշների համեմատ գերակայությունը դրսևորվում է մարդկային ներուժի զարգացման բոլոր բաղադրիչներում: «Մարդկային ներուժի զարգացման բարձր մակարդակով երկրների» խմբի միջինին Հայաստանը զիջում է՝ կյանքի սպասվող տևողության (2.7 տարով), կրթության սպասվող տևողության (1.1 տարով) և շնչային ՀԱԵ-ի (2,009 PPP դոլարով կամ 13.2%-ով) գծով: Աշխարհի միջինին Հայաստանը զիջում է միայն շնչային ՀԱԵ-ով (3,594 PPP դոլարով կամ 21.5%-ով):

Աղյուսակ 2. ՄՆԶԻ-ն և դրա բաղադրիչները ՀՀ-ում, տարբեր տարածաշրջաններում և երկրների խմբերում 2021թ.

	Կյանքի սպասվող տևողու-թյուն, տարի	Կրթության սպասվող տևողու-թյուն, տարի	Կրթության միջին տևողու-թյուն, տարի	Շնչային ՀԱԵ, (2017 PPP դոլար)	ՄՆԶԻ
Հայաստան	**72.0**	**13.1**	**11.3**	**13,158**	**0.759**
Եվրոպա և Կենտրոնական Ասիա (միջին)	72.9	15.4	10.6	19,352	0.796
Արևելյան Ասիա և Խաղաղօվկիա-նոսյան երկրներ (միջին)	75.6	13.8	7.8	15,580	0.749

Հարավային Ասիա (միջին)	67.9	11.6	6.7	6,481	0.632
Լատինական Ամերիկա և Կարիբյան երկրներ (միջին)	72.1	14.8	9.0	14,521	0.754
Ենթասահարական Աֆրիկա (միջին)	60.1	10.3	6.0	3,699	0.547
Արաբական երկրներ (միջին)	70.9	12.4	8.0	13,501	0.708
«Մարդկային ներուժի զարգացման բարձր մակարդակով» երկրների խումբ (միջին)	*74.7*	*14.2*	*8.3*	*15,167*	*0.754*
Թույլ զարգացած երկրներ (միջին)	64.2	10.2	5.2	2,881	0.540
Զարգացող երկրներ (միջին)	*69.9*	*12.3*	*7.5*	*10,704*	*0.685*
Զարգացած երկրներ (միջին)	79.0	16.5	12.3	45,087	0.899
Աշխարհ (միջին)	*71.4*	*12.8*	*8.6*	*16,752*	*0.732*

Աշխարհում մարդկային ներուժի զարգացման առումով առաջատարը Շվեյցարիան է (0.962 միավոր): Առաջին հնգյակում են նաև Նորվեգիան, Իսլանդիան, Հոնկոնգը և Ավստրալիան: Ցուցակի վերջին հորիզոնականում է Հարավային Սուդանը: Ցուցակի ստորին հնգյակի մյուս չորս երկրները ևս աֆրիկյան մայրցամաքից են՝ Բուրունդի, Կենտրոնաֆրիկյան Հանրապետություն, Նիգեր և Չադ:

Հակիրճ ներկայացնենք նաև մարդկային ներուժի զարգացման առանձին ենթաինդեքսների լավագույն և վատագույն արդյունքները:

Կյանքի ամենաերկար *սպասվող տևողությամբ* երկրները Հոնկոնգը (85.5 տարի) և Ճապոնիան են (84.8 տարի): Մյուս կողմից, կյանքի ամենակարճ սպասվող տևողությունը Չադում է՝ ընդամենը 52.5 տարի:

Կրթության սպասվող տևողությամբ առաջատարը Ավստրալիան է՝ 21.1 տարի: Հետնապահը Հարավային Սուդանն է՝ 5.5 տարի:

Կրթության միջին տևողությամբ առաջատարը Գերմանիան է՝ 14.1 տարի: Երկրորդ տեղում Շվեյցարիան է՝ 13.9 տարի: Ցավով պետք է նշել, որ մի քանի երկրներում կրթության միջին տևողությունը չի գերազանցում նույնիսկ երեք տարվան (Սենեգալ, Բուրկինա Ֆասո, Նիգեր, Մալի, Չադ, Գվինեա և այլն):

Ամենաբարձր *կենսամակարդակը* 2021 թվականի դրությամբ Լիխտեյնշտայնում է. այստեղ շնչային ՀԱԵ-ն գրեթե 147,000 PPP դոլար է: Հետնապահը դարձյալ աֆրիկյան մայրցամաքից է՝ Բուրունդին՝ 732 PPP դոլար շնչային եկամտով:

Նախկին ԽՍՀՄ և Կենտրոնական ու Արևելյան Եվրոպայի մի շարք երկրների ՄՆԶԻ-ն և դրա բաղադրիչները ներկայացված են Հավելվածում:

4. ՄԱՐԴԿԱՅԻՆ ՆԵՐՈՒԺԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՅԼ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

ՄՆԶԻ-ն ունի որոշ «բացեր»: Մասնավորապես, այն հաշվի չի առնում մարդկային ներուժի զարգացման առումով սոցիալական և գենդերային անհավասարության, ինչպես նաև էկոհամակարգի վրա մարդկային գործունեության բացասական ազդեցությունների պատճառած կորուստները: Առաջին բացը չեզոքացնելու նպատակով ՄԱԶԾ-ի փորձագետները ներմուծել են *անհավասարության հաշվառմամբ՝ մարդկային ներուժի զարգացման ինդեքս* (ԱՄՆԶԻ) ցուցանիշը, երկրորդի համար՝ *գենդերային զարգացման ինդեքս* (ԳԶԻ) և *գենդերային անհավասարության ինդեքս* (ԳԱԻ) ցուցանիշները, իսկ երրորդ բացթողումը շտկելու համար ներմուծվել է *մոլորակային կայունության հաշվառմամբ՝ մարդկային ներուժի զարգացման ինդեքսը* (ՄՄՆԶԻ):

ԱՄՆԶԻ-ի ներմուծման նպատակն է ճշգրտել ՄՆԶԻ-ն՝ հաշվի առնելով անհավասարությունը մարդկային ներուժի զարգացման երեք բաղադրիչներում (առողջապահություն, կրթություն և կենսամակարդակ):

Աղյուսակ 3. ՄՆԶԻ-ն և ԱՄՆԶԻ-ն 2021թ.

	ՄՆԶԻ	ԱՄՆԶԻ	Կորուստը, %
Հայաստան	**0.759**	**0.688**	**9.4**
Իրան	0.774	0.686	11.4
Թուրքիա	0.838	0.717	14.4
Վրաստան	0.802	0.706	12.0
Ադրբեջան	0.745	0.685	8.1
«Մարդկային ներուժի զարգացման բարձր մակարդակով» երկրների խումբ (միջին)	0.754	0.627	16.8
Աշխարհ (միջին)	0.732	0.590	19.4

Ինչպես արդեն նշվել է, 2021թ. Հայաստանում ՄՆԶԻ-ն կազմել է 0.759: Միևնույն ժամանակ, ԱՄՆԶԻ-ն գնահատվում է 0.688, այսինքն՝ շուրջ 9.4%-ով պակաս: Այսինքն՝ ՀՀ-ում անհավասարության զսպող ազդեցությունը մարդկային ներուժի զարգացման վրա 9.4% է: Աղյուսակ 3-ից երևում է, որ անհավասարության պատճառով ինդեքսի Հայաստանի շեղումից ավելի մեծ շեղումներ են արձանագրվել հարևան Թուրքիայում, Վրաստանում և Իրանում: Դա բացատրվում է նրանով, որ Հայաստանում եկամուտների անհավասարությունը որոշ չափով «փոխհատուցվում» է առողջապահական և կրթական ծառայությունների համեմատաբար հասանելիությամբ: Հատկանշական է, որ ԱՄՆԶԻ-ի գծով ևս Հայաստանի ցուցանիշը գերազանցում է թե՛ «մարդկային ներուժի զարգացման բարձր մակարդակով» երկրների խմբի, թե՛ զարգացող երկրների և թե՝ աշխարհի միջինին:

Համաձայն Աղյուսակ 4-ի՝ Հայաստանի ԳԶԻ-ն 2021 թվականին կազմել է 1.001, ինչը վկայում է երկրի գերդերային հավասարության բարձր մակարդակի մասին:

Աղյուսակ 4. ՄՆԶԻ-ն և ԳԶԻ-ն 2021թ.

	ՄՆԶԻ		ԳԶԻ	
	իգական	արական	արժեք	խումբ
Հայաստան	**0.757**	**0.756**	**1.001**	**բարձր**
Իրան	0.704	0.800	0.880	ցածր
Թուրքիա	0.806	0.860	0.937	միջին
Վրաստան	0.803	0.798	1.007	բարձր
Ադրբեջան	0.734	0.753	0.974	միջինից բարձր
«Մարդկային ներուժի զարգացման բարձր մակարդակով» երկրների խումբ (միջին)	0.742	0.763	0.973	-
Զարգացող երկրներ (միջին)	0.660	0.704	0.937	-
Աշխարհ (միջին)	0.715	0.747	0.958	-

Ինչպես նշվեց վերևում, ԳԶԻ-ի առումով Հայաստանում իրավիճակը բավական բարենպաստ է. այս ցուցանիշով Հայաստանը տարածաշրջանում զբաղեցնում է երկրորդ տեղը՝ զիջելով միայն Վրաստանին:

Նշվեց նաև, որ գենդերային անհավասարությունը գնահատելու համար ներմուծվել է *գենդերային անհավասարության ինդեքսը* (ԳԱԻ):

Աղյուսակ 5-ում ներկայացված են ԳԱԻ-ն և դրա հինգ բաղադրիչները Հայաստանի և տարածաշրջանի երկրների համար, ինչպես նաև բերված են զարգացող երկրների և աշխարհի համար այդ ցուցանիշների միջին արժեքները:

Աղյուսակ 5. ԳԱԻ-ն և դրա բաղադրիչները 2021թ.

	ԳԱԻ		Մայրական մահացության գործակից	Դեռահասների ծնելիության մակարդակ	Կանանց տեսակարար կշիռը խորհրդարանում, %	Առնվազն որոշակի միջնակարգ կրթությամբ բնակչության տեսակարար կշիռը, %		Աշխատուժի մասնակցության մակարդակ, %	
	արժեք	հորիզոնական				իգական	արական	իգական	արական
Հայաստան	**0.216**	**53**	**26**	**18.5**	**33.6**	**96.0**	**97.1**	**42.7**	**63.0**
Իրան	0.459	115	16	30.2	5.6	71.6	76.0	14.4	68.1
Թուրքիա	0.272	65	17	16.9	17.3	56.3	75.9	31.8	69.4
Վրաստան	0.280	66	25	31.7	19.3	97.1	98.3	51.0	68.0
Ադրբեջան	0.294	70	26	40.1	18.2	93.6	97.6	60.4	67.3
«Մարդկային ներուժի զարգացման բարձր մակարդակով» երկրների խումբ (միջին)	0.329	-	62	28.0	25.8	72.7	78.0	53.6	73.5
Զարգացող երկրներ (միջին)	0.487	-	247	46.5	23.9	56.9	64.7	44.4	72.8
Աշխարհ (միջին)	0.465	-	225	42.5	25.9	64.2	70.3	46.2	71.7

Աղյուսակ 5-ից երևում է, որ.

• 2021 թվականին ՀՀ-ում մայրական մահացության գործակիցը 26 է (այսինքն՝ յուրաքանչյուր 100,000 ծննդի հաշվով 26 կին մահանում է հղիության հետ կապված խնդիրների պատճառով),

• դեռահասների ծնելիության մակարդակը 18.5 է (այսինքն՝ 15-19 տարեկան յուրաքանչյուր 1000 կանանց բաժին է ընկնում 18.5 ծնունդ),

• կանանց (կին պատգամավորների) մասնաբաժինը խորհրդարանում 33.6% է,

• 25 և ավելի տարեկան կին (տղամարդ) բնակչության 96.0% (97.1%)-ը ունի առնվազն որոշակի (հնարավոր է՝ ոչ լրիվ) միջնակարգ կրթություն,

• աշխատանքային տարիքի՝ 15 և ավելի տարեկան կին (տղամարդ) բնակչության 42.7% (63.0%)-ը հանդիսանում է զբաղված կամ ակտիվորեն փնտրում է աշխատանք:

Հարկ է նշել, որ տարածաշրջանում ամենացածր գենդերային անհավասարությունը Հայաստանում է: Այս հանգամանքի հիմնական նպաստող գործոնները կանանց ընդհանուր կրթվածության և քաղաքական գործընթացներում կանանց ներգրավվածության համեմատաբար բարձր մակարդակներն են:

ՄՄՆԶԻ-ն կառուցված է նույն սկզբունքով, ինչ ԱՄՆԶ-ն. մոլորակային կայունության լիակատար պահպանման պարագայում այն հավասար է ՄՆԶԻ-ին, իսկ որքան ավելի մեծ են էկոհամակարգի վրա մարդկային գործունեության բացասական ազդեցությունները, այնքան ՄՄՆԶԻ-ն ավելի փոքր է ՄՆԶԻ-ից:

Աղյուսակ 6. ՄՄՆԶԻ-ն 2021թ.

	ՄՆԶԻ	ՄՄՆԶԻ	Կորուստը, %	Ածխածնային արտանե-տումներ, շնչային (տոննա)	Ռեսուրսների սպառում, շնչային (տոննա)
Հայաստան	**0.759**	**0.727**	**4.2**	**2.0**	**6.0**
Իրան	0.774	0.677	12.5	8.9	13.2
Թուրքիա	0.838	0.741	11.6	4.7	17.5
Վրաստան	0.802	0.749	6.6	2.5	10.4
Ադրբեջան	0.745	0.688	7.7	3.7	10.6
«Մարդկային ներուժի զարգացման բարձր մակարդակով» երկրների խումբ (միջին)	0.754	0.667	11.5	5.4	16.5
Զարգացող երկրներ (միջին)	0.685	0.636	7.2	3.3	10.5
Աշխարհ (միջին)	0.732	0.667	8.9	4.3	12.4

Աղյուսակ 6-ում ներկայացված է ՄՄՆԶԻ-ին առնչվող համեմատական տեղեկատվությունը: Աղյուսակից երևում է, որ ՄՄՆԶԻ-ն 2021-ին կազմել է 0.727՝ ՄՆԶԻ-ի 0.759-ի դիմաց: Աղյուսակից պարզ է դառնում, որ շրջակա միջավայրի վրա մարդկային գործունեության բացասական ազդեցությունը ՀՀ-ում 2021 թվականին կազմել է 4.2%: Ընդ որում, մոլորակային կայունության խախտմամբ պայմանավորված՝ այս կորուստն ամենափոքրն է տարածաշրջանում: Այնուամենայնիվ, միայն ՄՄՆԶԻ-ով դասակարգման դեպքում Հայաստանի դիրքը տարածաշրջանում բարելավվում է ընդամենը մեկ հորիզոնականով. այս դեպքում Հայաստանը տարածաշրջանում զբաղեցնում է երրորդ հորիզոնականը՝ Ադրբեջանից բացի առաջ անցնելով նաև Իրանից:

Մոլորակային կայունության բաղադրիչների մասով իրավիճակը Հայաստանում բավական բարվոք է. այսպես, մեկ շնչի հաշվով թե՛ ածխածնային արտանետումները և թե՛ անկայուն սպառման ծավալը ավելի ցածր են, քան տարածաշրջանի մյուս երկրներում: Հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ ՄՄՆԶԻ-ի գծով ևս Հայաստանի ցուցանիշը գերազանցում է թե՛ «մարդկային ներուժի զարգացման բարձր մակարդակով» երկրների խմբի, թե՛ զարգացող երկրների և թե' աշխարհի միջինին, կարելի է եզրակացնել, որ շրջակա միջավայրի կայունությանը սպառնացող ռիսկերի ազդեցությունը ՀՀ մարդկային ներուժի զարգացման գործընթացի վրա բավական թույլ է:

Գծապատկեր 4. ՀՀ մարդկային ներուժի զարգացման ցուցանիշների համադրումը երկրների տարբեր խմբերի և աշխարհի միջինների հետ, 2021թ.



Ինչպես երևում է Գծապատկեր 4-ից, մարդկային ներուժի զարգացման բոլոր հիմնական ցուցանիշների՝ ՄՆԶԻ, ԱՄՆԶԻ, ՄՄՆԶԻ, ԳԶԻ և ԳԱԻ արժեքների

առումով «մարդկային ներուժի զարգացման բարձր մակարդակով» և զարգացող երկրների խմբերի, ինչպես նաև աշխարհի միջինի համեմատ Հայաստանում վիճակն ավելի բարվոք է:

5. ԱՄՓՈՓՈՒՄ

• «Մարդկային ներուժի զարգացման զեկույց-2021/2022»-ը վկայում է, որ Հայաստանը մարդկային ներուժի զարգացման մակարդակով շարունակում է ընդգրկված լինել «մարդկային ներուժի զարգացման բարձր մակարդակով» երկրների խմբում: **Այնուամենայնիվ, պետք է փաստել, որ 2019 թվականի համեմատ 2021-ին նահանջ է արձանագրվել ինչպես զբաղեցրած հորիզոնականի (2019 թվականի 81-րդ հորիզոնականից Հայաստանը տեղափոխվել է 85-րդ հորիզոնական), այնպես էլ ՄՆԶԻ-ի արժեքի (2019 թվականի 0.778-ի համեմատ 2021-ին՝ 0.759) առումով:** ՄՆԶԻ-ի նվազումը պայմանավորված է առողջության և կենսամակարդակի բաղադրիչներով՝ կյանքի սպասվող տևողությունը նվազել է 3.1 տարով, իսկ շնչային ՀԱԵ-ն՝ 736 PPP դոլարով կամ 5.3%-ով:

• Զեկույցը վկայում է, որ ՀՀ-ում կրթության միջին տևողության ցուցանիշի արժեքը «մարդկային ներուժի զարգացման բարձր մակարդակով» երկրների խմբի միջինին գերազանցում է 3.0 տարով, զարգացող երկրների միջինին՝ 3.8 տարով, իսկ աշխարհի միջինին՝ 2.7 տարով: **Պետք է փաստել, որ, չնայած համաձայն ՄՆԶԶ-2021/2022-ի տվյալների՝ կրթության միջին տևողությամբ Հայաստանը չի զիջում նույնիսկ «մարդկային ներուժի զարգացման շատ բարձր մակարդակով» երկրների խմբում ընդգրկված մի շարք երկրների, այնուամենայնիվ, Զեկույցը, բնականաբար, ոչինչ չի ասում կրթության որակի մասին, որը հայտնի է՝ զգալիորեն ցածր է այդ երկրների մեծ մասի մակարդակից:**

• **Հարկ է նշել, որ ոչ այնքան բարձր կենսամակարդակը ՀՀ ՄՆԶԻ-ի ձևավորման գործում շարունակում է զսպող դեր կատարել: Շնչային համախառն ազգային եկամտով Հայաստանը հետ է իր խմբի («մարդկային ներուժի զարգացման բարձր մակարդակով երկրների» խումբ) միջինից 13.2%-ով, իսկ աշխարհի միջինից՝ 21.5%-ով: Այդ ցուցանիշով Հայաստանը իր հարևաններից չի զիջում միայն Իրանին:**

• **Հայաստանը ՄՆԶԻ-ի ցուցանիշով տարածաշրջանի հինգ երկրների թվում նախավերջինն է, գերազանցում է միայն Ադրբեջանին:**

• **ԱՄՆԶԻ-ի ցուցանիշով Հայաստանը տարածաշրջանի հինգ երկրների թվում Թուրքիայից և Վրաստանից հետո երրորդն է:**

- **ԳԶԻ-ի ցուցանիշով Հայաստանը տարածաշրջանում երկրորդն է, զիջում է միայն Վրաստանին:**
- **ԳԱԻ-ի ցուցանիշով Հայաստանը տարածաշրջանի առաջատարն է:**
- **ՄՄՆԶԻ-ի ցուցանիշով Հայաստանը տարածաշրջանում Վրաստանից և Թուրքիայից հետո երրորդն է:**
- **Վերոհիշյալ բոլոր ցուցանիշների (ՄՆԶԻ, ԱՄՆԶԻ, ԳԶԻ, ԳԱԻ, ՄՄՆԶԻ) գծով Հայաստանը գերազանցում է թե՛ «մարդկային ներուժի զարգացման բարձր մակարդակով» երկրների խմբի, թե՛ զարգացող երկրների և թե՝ աշխարհի միջիններին:**

Ինչպես վերևում նշվեց, Զեկույցը կազմված է այն տրամաբանությամբ, որ ժամանակակից աշխարհին բնորոշ մտահոգիչ ու անորոշություններով լի իրավիճակի պայմաններում վտանգվում է մարդկային զարգացումը: Այնուամենայնիվ, այն ավարտվում է լավատեսական նոտայով: Մասնավորապես, որպես հուսադրող հանգամանք նշվում է, որ բազմաթիվ բացասական միտումների (անորոշություններ, անապահովություն, բևեռացում և այլն) հաղթահարման համար մարդկությունն ի վիճակի է արագ վերաիմաստավորել ապագան և նորացնել ու նոր իրավիճակին հարմարեցնել ինստիտուտները:

ՀԱՎԵԼՎԱԾ

ՄՆԶԻ-ն և դրա բաղադրիչները նախկին ԽՍՀՄ և Կենտրոնական ու Արևելյան Եվրոպայի մի շարք երկրներում

ՄՆԶԻ-ի հորիզոնական (2021թ.)	Երկիր	Մարդկային ներուժի զարգացման ինդեքս (ՄՆԶԻ) (2021թ.)	Կյանքի սպասվող տևողությունը, տարի	Կրթության սպասվող տևողությունը, տարի	Կրթության միջին տևողությունը, տարի	Համախառն ազգային եկամուտ ՀԱԵ) 1 շնչի հաշվով, PPP դոլար	ՄՆԶԻ-ի հորիզոնական (2019թ.)	ՄՆԶԻ-ի հորիզոնականի փոփոխությունը 2019թ. համեմատ, +՝ բարելավում, -՝ վատթարացում, 0՝ անփոփոխ
ՄԱՐԴԿԱՅԻՆ ՆԵՐՈՒԺԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՇԱՏ ԲԱՐՁՐ ՄԱԿԱՐԴԱԿ								
23	Սլովենիա	0.918	80.7	17.7	12.8	39,746	22	-1
31	Էստոնիա	0.890	77.1	15.9	13.5	38,048	29	-2
32	Չեխիա	0.889	77.7	16.2	12.9	38,745	27	-5
34	Լեհաստան	0.876	76.5	16.0	13.2	33,034	35	1
35	Լիտվա	0.875	73.7	16.3	13.5	37,931	34	-1
39	Լատվիա	0.863	73.6	16.2	13.3	32,803	37	-2
40	Խորվաթիա	0.858	77.6	15.1	12.2	30,132	43	3
45	Սլովակիա	0.848	74.9	14.5	12.9	30,690	39	-6
46	Հունգարիա	0.846	74.5	15.0	12.2	32,789	40	-6
49	Չեռնոգորիա	0.832	76.3	15.1	12.2	20,839	48	-1
52	Ռուսաստանի Դաշնություն	0.822	69.4	15.8	12.8	27,166	52	0
53	Ռումինիա	0.821	74.2	14.2	11.3	30,027	49	-4
56	Ղազախստան	0.811	69.4	15.8	12.3	23,943	51	-5
60	Բելառուս	0.808	72.4	15.2	12.1	18,849	53	-7
63	Վրաստան	0.802	71.7	15.6	12.8	14,664	61	-2
63	Սերբիա	0.802	74.2	14.4	11.4	19,123	64	1
ՄԱՐԴԿԱՅԻՆ ՆԵՐՈՒԺԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՐՁՐ ՄԱԿԱՐԴԱԿ								
67	Ալբանիա	0.796	76.5	14.4	11.3	14,131	69	2
68	Բուլղարիա	0.795	71.8	13.9	11.4	23,079	56	-12
74	Բոսնիա և Հերցեգովինա	0.780	75.3	13.8	10.5	15,242	73	-1
77	Ուկրաինա	0.773	71.6	15.0	11.1	13,256	74	-3
78	Հյուսիսային Մակեդոնիա	0.770	73.8	13.6	10.2	15,918	82	4
80	Մոլդովա	0.767	68.8	14.4	11.8	14,875	90	10

85	Հայաստան	0.759	72.0	13.1	11.3	13,158	81	-4
91	Ադրբեջան	0.745	69.4	13.5	10.5	14,257	88	-3
91	Թուրքմենստան	0.745	69.3	13.2	11.3	13,021	111	20
101	Ուզբեկստան	0.727	70.9	12.5	11.9	7,917	106	5
ՄԱՐԴԿԱՅԻՆ ՆԵՐՈՒԺԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋԻՆ ՄԱԿԱՐԴԱԿ								
118	Ղրղզստան	0.692	70.0	13.2	11.4	4,566	120	2
122	Տաջիկստան	0.685	71.6	11.7	11.3	4,548	125	3

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

*Նյութի ամբողջական կամ դրանից **քաղվածքների** վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան ակտիվ հղման տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը:*